

**ԿՐԿԻՆ «ՀԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌԵՐԻ» ՀԵՂԻՆԱԿԻ ՈՒ
ԹՎԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ, ԱԲՐԱՀԱՄ ՏԵՐՅԱՆԻ ՄԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹՎ**

Բանալի բառեր՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ, ս. Մեսրոպ Մաշտոց, ուսումնասիրություններ, հակափաստարկներ, վանականություն, աղբյուրներ, բովանդակություն, համատեքստ, աստվածաբանություն, պատմական ժամանակաշրջան :

Հայկական հարուստ մատենագրական ժառանգության մեջ իրենց ուրույն տեղը զբաղեցնող «Հաճախապատում ճառերը» ավանդաբար վերագրվել են ս. Գրիգոր Լուսավորչին, սակայն ԺԹ դարից սկսյալ, այս տեսակետը ենթարկվել է բազմաթիվ քննադատությունների: Թեև ճառերի հեղինակի ինքնության հստակեցման նպատակով մի շարք ուսումնասիրություններ են արվել, բայց և այնպես, արդյունքները մի հայտարարի չեն բերվել: Ընդհակառակը առաջ են քաշվել հեղինակային պատկանելության հնարավոր մի քանի տարբերակներ և ուսումնասիրողների մեծ մասի կողմից անտեսվել են մնացյալ ուսումնասիրողների ներկայացրած փաստարկները, ինչի արդյունքում էլ անտեղի շփոթ է բարձրացել ու նոր հարցականներ են առաջացել¹:

Այս խնդիրների լուծման տեսանկյունից, վերջերս ծավալուն ուսումնասիրություն է կատարել Աբրահամ Տերյանը՝ ներկայացնելով այն Ամերիկյան կաթոլիկ համալսարանի (The Catholic University of America) «The Fathers of the Church» շարքի իբրև 143-րդ հատոր տպագրվող «Հաճախապատում ճա-

* Գևորգյան հոգևոր ճեմարան, ասպիրանտ, david.saakyan26@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ մայիսի 24, 2022, գրախոսելու օրը՝ հունիսի 17, 2022:

¹ Հյր. Գ. Զարբհանյալեան, Պատմություն հայ հին դպրության. Գ-ԺԳ դար, Գ տպ., Վենետիկ, 1932, էջ 196-199, Ն. Եպս. Պողարեան, Հայ գրողներ. Ե-ԺԷ դար, Երուսաղեմ, 1971, էջ 2-3, Լ. Խաչիկյան, «Օտարալեզու հայ գրականությունը չորրորդ դարում», ՊԲՀ, 1973, № 3 (62), էջ 30, Հ. Բախչինեան, Հայ միջնադարեան գրականություն, Երևան, 2006, էջ 28, Վ. Նիխադարյան, Հայ հին գրականության պատմություն, Երևան, 2014, էջ 96, Հ. Քյոսեյան, Ներածություն հայ եկեղեցական մատենագրության, խմբ. Գ. Մուրադյան, Երևան, 2018, էջ 12:
Մնացյալ ուսումնասիրությունները կվկայակոչենք շարադրամբի ընթացքին:

ոերի» անգլերեն իր թարգմանության առաջաբանում²: Ստորև կանգրադառնանք «Հաճախապատում ճառերի» հեղինակությանը վերաբերող խնդիրներին և դրանց շուրջ Ա. Տերյանի առաջ քաշած լուծումներին:

Ինչպես նշեցինք, «Հաճախապատում ճառերի» հեղինակությունը դարեր շարունակ վերագրվել է ս. Գրիգոր Լուսավորչին, ինչը, բնականաբար, որևէ գիտնականի կոահում չէ, այլ՝ բնագրային ավանդություն. ճառերը մեզ հասել են Լուսավորչի անվամբ: Ընդ որում, ս. Գրիգոր հայրապետի անունը առկա է պահպանված բնագրերի ոչ միայն ընդհանուր երկի, այլև՝ յուրաքանչյուր ճառի վերնագրում առանձնաբար: Այնուամենայնիվ, Լուսավորչի անվան առկայությունը ճառերի վերնագրերում, ամենայն հավանականությամբ, գրվածքին ավելի մեծ հեղինակություն ընծայելու նպատակով հետագայում արված հավելում է³: Այս տեսակետն ավելի է ամրապնդում Ա. Տերյանը այն նկատառմամբ, որ պահպանված վերնագրերը հաճախ չեն համապատասխանում ճառերի բովանդակությանը: Օրինակ՝ ԻԱ ճառում, որի վերնագիրն է «Երանելոյն սրբոյն Գրիգորի վասն տրոց իմաստութեան որ ի Հոգւոյն Սրբոյ պարգեւեցաւ՝ սուղ ինչ բանս», Ա. Հոգու մասին ընդհանրապես չի խոսվում⁴: Հետևաբար՝ հեղինակային պատկանելությունը որոշել հիմնվելով նման վերնագրերի վրա, անտեղի է:

«Հաճախապատում ճառերի» պահպանված հնագույն ձեռագրում, որը թվագրվում է ԺԳ դարով (1215 թ.)⁵, վերնագրերն արդեն այդպիսին են⁶: Մեկ այլ ձեռագրից, որը թվագրվում է Թ դարով, պահպանված է ընդամենը 3 պատառիկ (լուսանկարի տեսքով), որոնցում ևս երևում է ս. Գրիգորի անվան առկայությունը⁷: Սակայն ճառերը մինչ այդ էլ հայտնի են եղել Լուսավորչի անվամբ: Է դարում կազմված «Կնիք Հաւատոյ» ժողովածուի մեջ մեջբերված է մի հատված, որը թեև բավականին տարբերվում է մեզ հասած «Հաճախապատում

² *Moralia et Ascetica Armeniaca: The Oft-Repeated Discourses (Yačaxapatum čark')*, Translated with Introduction and Notes by **Abraham Terian**, (The Fathers of the Church Series, 143 vol.), The Catholic University of America Press, Washington, D.C., 2021.

³ **Մ. Աբեղյան**, *Երկեր*, հ. Գ, Երևան, 1968, էջ 138 հմմտ. **Ա. Մարտիրոսյան**, *Մաշտոց (պատմա-քննական տեսություն)*, խմբ.՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1982, էջ 113:

⁴ *Yačaxapatum Čark'*, Tr., Intr. by **Abraham Terian**, p.16.

⁵ Եղմ. 94 ձեռագիրն է, որը ՄՄ 947 (ձաղրնտիր) ձեռագրի հետ ի սկզբանե կազմել են մեկ հատոր և անջատվել են առանձին ձեռագրերի, ամենայն հավանականությամբ, ԺԷ դարում (տե՛ս **Ն. Եպս. Մովսկան (Պողարեան)**, «Յանախապատում (1215)», *Սիոն*, 1961 (1), թիվ 3, էջ 74-75, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, կազմ.՝ **Ս. Եգանեան**, խմբ.՝ **Փ. Անթարեան**, **Յ. Քէօսէան**, **Ա. Ղազարոսեան**, **Շ. Քհչ.** *Հայրապետեան*, ցանկ.՝ **Վ. Դեբիկեան**, Երևան, 2007, էջ 1379-1382):

⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի, հ. Ա, կազմ.՝ **Ա. արք. Սյուրմեյան**, Վենետիկ, 1948, էջ 226-227:

⁷ **Ե. Ալեքսանեան**, «Հնագիր «Յանախապատում» մը», *Ամենուն տարեցոյցը*, 1927 (21-րդ տարի), էջ 463:

ճառերի» համապատասխան դրվագից, բայցևայնպես, քաղված լինելով այդ ճառերից՝ խորագրում կրում է ս. Գրիգորի անունը՝ իբրև հեղինակի⁸։ Վերջինս պահպանված հնագույն հավաստի վկայությունն է ճառերի գոյության կամ դրանց հեղինակի ինքնությունից վերաբերյալ։

Ազաթանգեղոսի պատմության մեջ նշված է, որ ս. Գրիգորը հեղինակել է «յաճախագոյն», այսինքն՝ հաճախ պատմվող ճառեր⁹, ինչը կարող էր լինել ամենավաղ վկայությունը «Հաճախապատում ճառերի» հեղինակի ինքնությունից վերաբերյալ, եթե այս նույն դրվագը գրեթե նույն բառերով առկա չլիներ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկում և չվերագրվեր ս. Մեսրոպ Մաշտոցին¹⁰։

Ինդրին անդրադարձած ուսումնասիրողների գերակշռող մասը կարծում է, որ Ազաթանգեղոսի դրվագը Կորյունի երկից արված «բանաբաղություն» է, և Կորյունի երկն ավելի վաղ ու հավաստի գրություն է, քան Ազաթանգեղոսի պատմության ներկայիս տարբերակը, որի մեզ հասած բնագրերում, ըստ երևույթին, ժամանակի ընթացքում տեղ են գտել էական փոփոխություններ և վրիպումներ¹¹։ Ելնելով սրանից՝ մի շարք գիտնականներ, ինչպիսիք են Պաուլ Ֆեթ-

⁸ Կնիք հաւատոյ Հնդհանուր Սուրբ Եկեղեցւոյ յուղղափառ եւ ս. հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց յատուրս **Կոմիտաս Կաթողիկոսի համահաւաքեալ** (ՄՀ, հ. Գ, է դար) Անթիլիաս-Լիբանան, 2005, հ. 1-19, էջ 59-62 հմմտ. **Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի ասացեալ ճառս Յաճախապատումս եւ լուսաւոր վարդապետութիւնս յաղագս աւգտի խողաց** (ՄՀ, հ. Ա, է դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, ճառ Ա, հ. 1 - ճառ Բ, հ. 7, էջ 7-8։

⁹ «... սկսեալ երանելոյն **Գրիգորի ճառս յաճախագոյն** (ընդգծումները մերն են – Գ.Ս.) **դժուարապատումս**, առակս խորիմացս **դիւրալուս** բազմադիմիս շնորհագիրս, յարդարեալս ի զարուսեմէ եւ ի հիւքոյ գրոց մարգարէականաց, լի ամենայն ճաշկաւ կարգեալս եւ յարիմեալս աւետարանական հաւատոցն ճշմարտութեան» (**Ազաթանգեղեայ պատմութիւն** (ՄՀ, հ. Բ, է դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, հտժ. ՃԻԷ, հ. 6, էջ 1728)։

¹⁰ «... սկսեալ երանելոյն **Մաշտոցի ճառս յաճախագոյն** (ընդգծումները մերն են – Գ.Ս.), **դիւրապատումս**, **շնորհագիրս**, բազմադիմիս ի լուսաւորութեմէ եւ ի հիւքոյ գրոց մարգարէականաց կարգել եւ յարիմել, լի ամենայն ճաշկաւ աւետարանական հաւատոցն ճշմարտութեան» (**Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելոյ սրբոյն Մեսրոպայ Վարդապետի մերոյ Թարգմանչի ի Կորիւն Վարդապետէ յաշակերտէ նորին** (բնագիր Ա.) (ՄՀ, հ. Ա, է դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, գլ. ԻԱ, հ. 1, էջ 249)։

¹¹ 3. **Տաշեան**, Ազաթանգեղոս առ Գէորգայ ասորի եպիսկոպոսին և ուսումնասիրութիւն Ազաթանգեղեայ գրոց, Վիեննա, 1891, էջ 72-79, Գ. **Ֆեախեան**, «Ուսումնասիրություններ Կորիւնի շուրջ։ Բ. Կորիւն և Ազաթանգեղոս», *Անահիտ*, նոր շրջան, 1929 (Ա), թիվ 2, էջ 80-82, Հր. **Անադյան**, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 31։ Հակառակ տեսակետի համար տես Մ. **Վրդ. Չամչեանց**, Պատմութիւն Հայոց. Ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 668, Ն. **Աղոնց**, «Դարձեալ Կորիւնի շուրջը», ՀԱ, 1928 (ԽԲ), թիվ 1-2, էջ 90, Ա. **Մուշեղյան**, «Կորյուն քե՞ Ազաթանգեղոս. բնագրերի բնությունը նոր տեսանկյունից», ԼՀԳ, 1996, թիվ 2, էջ 49. հմմտ. նաև Պ. Մ. **Մուրադյան**, Ազաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Երևան, 1982, էջ 261, ծնթ. 5, Ն. **Բիւզանդացի**, Կորիւն Վարդապետ եւ նորին Թարգմանութիւնը. գիրք Մակաբայեցւոց, Եւթաղ Աղեքսանդրացի, Ազաթանգեղոս եւ Փաւստոս Բիւզանդ, Տփլիս, 1900, էջ Է-ԺԲ, Հյւր. Բ. **Սարգիսեան**, Ազաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն, Վենետիկ, 1890, մաս Ա, գլ. ԺԳ, էջ 263-264 (մանրամասն տես էջ 232-264), Գ. **Ֆեախեան**, Ա.

Թերը, Մանուկ Աբեղյանը և Գառնիկ Ֆնտգլյանը, հանգում են այն եզրակացության, որ «Հաճախապատում ճառերի» հեղինակը ս. Մեսրոպ Մաշտոցն է¹²:

Հիմք ընդունելով Կորյունի այս վկայությունը և ի մտի ունենալով այն հանգամանքը, որ «Հաճախապատում ճառերի» ս. Գրիգոր Լուսավորչի գրչին պատկանելու վերաբերյալ է դարասկզբից ավելի վաղ թվագրվող որևէ վկայություն կամ փաստ չկա՝ կարո՞ղ ենք արդյոք ասել, որ այդ ճառերի հեղինակը եղել է ս.

Զօպանեան, ««Յանախապատում»ի շուրջ», *Անահիտ*, նոր շրջան, 1932 (Գ), թիվ 1-2, էջ 90, **Հր. Անադյան**, *Հայոց լեզվի պատմություն*, II մաս, Երևան, 1951, էջ 118:

Խնդրի շուրջ Ֆնտգլյանը հավելում է, որ Կորյունն իր անունով ծանոթ էր բոլորին իբրև «գիտակ» անձնավորություն, մինչդեռ Ագաթանգեղոս անունով մարդու որևէ մեկը չի ճանաչում: Վերջինիս մասին, ըստ Ֆնտգլյանի, վկայում են միայն Ղազար Փարպեցին և Մովսես Խորենացին, այն էլ «ի լոռ» (տե՛ս **Գ. Ֆնտգլեան, Ա. Զօպանեան**, ««Յանախապատում»ի շուրջ», էջ 85): Այս կարծիքը, սակայն, թյուր է և սուբյեկտիվ: Ե-Թ դարերում Կորյունի մասին խոսում են միայն չորս հոգի՝ Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, Վրթանես Քերթոզը և Եզնիկ Երեցը, մինչդեռ նույն ժամանակահատվածում, Ագաթանգեղոսի մասին խոսում են վեց հեղինակ՝ Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, Կոմիտաս Ա. Աղեցցին, Սեբեոսը, Հովհան Մամիկոնյանը և Ահարոն Վանանդեցին, ընդ որում՝ բոլորն էլ Ագաթանգեղոսին ճանաչում են իբրև «գրչի» և «պատմագրի»: Հետևաբար, այն կարծիքը, որ Կորյունը հայտնի էր բոլորին, իսկ Ագաթանգեղոսը իբրև անձ՝ ոչ ոքի, չի համապատասխանում իրականությանը:

Կորյունի մասին վկայությունները տե՛ս *Հայոց Պատմություն յերիս հատուածս ասացեալ Մովսիսի Խորենացոյ ի խնդրոյ Սահակայ Բագրատունոյ* (ՄՀ, հ. Բ, Ե դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, հտժ. Գ, գլ. 4, հ. 11, էջ 2096: *Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց* (ՄՀ, հ. Բ, Ե դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, դրգ. Ա, գլ. Ժ, հ. 4, էջ 2212, գլ. ԺԸ, հ. 4, էջ 2234-2235, դրգ Բ, գլ. ԼԸ, հ. 8, էջ 2266, *Յաղագս պատկերամարտից [ի Վրթանիսէ Քերթոզէ]* (ՄՀ, հ. Գ, Զ դար), Անթիլիաս-Լիբանան, 2004, հ. 59, էջ 499, *Նկարագիր Կարգաց բանից Եզնկանն Երիցոյ. թէ ո՛ւստի էին կամ ո՛րպէս. գիտ՞րդ յաջորդութիւնք թագաւորացն Տրդատայ եւ քահանայապետիցն ի սրբոյն Գրիգորէ որ կացին առ մեզ: Վարումն փոքր ի շատէ գրոշմեալ վասն գիտութեան ի վերայ հասանելոյ* (ՄՀ, հ. Զ, Ը դար), Անթիլիաս-Լիբանան, 2007, հ. 21, էջ 1035:

Ագաթանգեղոսի մասին վկայությունները տե՛ս *Հայոց Պատմութիւն Մովսիսի Խորենացոյ*, Բ գիրք, գլ. ԿԵ, հ. 1, 3, 8, էջ 1951-1952, գլ. ՀԴ, հ. 14, էջ 1962, գլ. ՀԹ, հ. 11, էջ 1969, գլ. Զ, հ. 13, էջ 1971, գլ. ԶԳ, հ. 13, էջ 1977, գլ. ԶԶ, հ. 17, էջ 1984, *Պատմութիւն սրբոց Հոփսիմեանց* (ՄՀ, հ. Բ, Ե դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, հ. 4, էջ 2193, հ. 60, էջ 2196, *Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց*, առաջաբան, գլ. Ա, հ. 1, էջ 2201, գլ. Բ, հ. 1, 3, էջ 2202, գլ. Գ, հ. 2, էջ 2203, *Կնիք հաւատոյ*, հ. 1-6, էջ 263-264, *Պատմութիւն Սեբեոսի*, գլ. Ա, հ. 10-11, էջ 453, *[Յովհաննու Մամիկոնէից եպիսկոպոսի] Սկիզբն պատմութեան Չորրորդ Հայոց եւ ժամանակագրութեանն Զենոբայ Ասորոյ, որ ձեռնագրեցաւ առաջին եպիսկոպոս ի սրբոյն Գրիգորէ երկրին Մամիկոնենից (Պատմութիւն Տարանոյ)* (ՄՀ, Ե հատոր, Ե դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, մաս Բ, հ. 100, էջ 1000, մաս Գ, հ. 22, էջ 1004, *Պատմութիւն սրբոյ Նշանին Նունէի Վրաց տան առաջնորդի [յԱհարոնէ Վանադեցոյ]* (ՄՀ, հ. Թ, Թ դար), Անթիլիաս-Լիբանան, 2008, հ. 15, էջ 994, հ. 84, էջ 997:

¹² **Պ. Ֆեքքեր**, *Հայկական աշխատասիրություններ*, Թարգմ.՝ **Յ. վրդ. Տաշեան**, Վիեննա, Մխիթարեան, 1895, էջ 75, աղտ. 2, **Մ. Աբեղյան**, *Երկեր*. Գ., էջ 138-139, **Կորիւն**, *Վարք Մաշտոցի*, ուղղելալ եւ լուսաբանելալ ի *Գառնիկ Ֆնտգլեանէ*, Երուսաղեմ, 1930, էջ 86-87, հմմտ. **Գ. Ֆնտգլեան, Ա. Զօպանեան**, ««Յանախապատում»ի շուրջ», էջ 84:

Մեսրոպ Մաշտոցը: Ինչպես իրավացիորեն նշում է Ա. Տերյանը. ««Հաճախապատում ճառերը» չեն համապատասխանում Կորյունի վերը նշված նկարագրությանը, քանի որ դրանք շնորհագիր չեն, ի տարբերություն «Սբ. Գրիգորի վարդապետության», որը օգտագործված է ճառերում: Ավելին՝ ճառերը ծայրերիծայր լեցուն են լեզվական շեղումներով, ինչպիսիք չկան ոչ միայն սբ. Մաշտոցի, այլև իր անմիջական աշակերտների երկերում»¹³:

Բոլոր ուսումնասիրողները, որոնք անդրադառնում են «Հաճախապատում ճառերի» լեզվին, գրեթե միաբերան վկայում են, որ այն «ոսկեդարյան հայերենն է» և լեցուն է լեզվական շեղումներով ու ոճային տարբերություններով¹⁴: Ճառերում հարյուրներով առկա են հետդասական շրջանի՝ հունաբան դպրոցի եզրույթներ ու բառեր¹⁵ և զգալիորեն արտահայտված է ասորերենի ազդեցությունը¹⁶: Այս ամենը չէր կարող տեղ գտնել ճառերում, եթե հեղինակը լիներ ս. Մեսրոպ Մաշտոցը:

Հեղինակի ինքնությունը պարզելու համար ուսումնասիրողներն անդրադարձել են նաև ճառերում առկա սուրբգրային մեջբերումներին, որոնց վերաբերյալ մինչ այժմ գոյություն է ունեցել երկու հակադիր տեսակետ:

Ըստ Պաուլ Ֆեթթերի՝ բազմաթիվ մեջբերումներ համապատասխանում են Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը, ինչը նշանակում է, որ հեղինակը քաջածանոթ է եղել դրան, սակայն, քանի որ ոչ բոլոր մեջբերումներն են Աստվածաշնչի հայկական բնագրի բառացի կրկնությունը, Ֆեթթերը եզրակացնում է, որ հեղինակը ճառերը գրել է հենց թարգմանության ընթացքում՝ մինչև տեքստի վերջնական խմբագրումը, ինչից և եզրակացնում է, որ հեղինակը սահակմեսրոպյան ժամանակաշրջանում է գործել¹⁷: Ըստ Հ. Վարդան Հացունու՝ ճառերում մեջբերված հատվածների տարբերություններն Աստվածաշնչի բնագրի համապատասխան հատվածներից պայմանավորված են նրանով, որ հեղինակը մե'րթ օգտագործել է Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը, մե'րթ ինքն է թարգմանել աստվածաշնչյան տեղիները, ինչի հիման վրա Հացունին ենթա-

¹³ Yačaxapatum Čark', Tr., Intr. by Abraham Terian, p. 10-11:

¹⁴ Ե. արք. Դուրեան, Պատմության Հայ Մատենագրության, Երևան, 1933, էջ 83, 422, 424, Գ. Ֆնտզեան, Ա. Զոպանեան, ««Յանախապատում»ի շուրջ», էջ 86-89, Հր. Անադյան, Հայոց գրերը, էջ 335, Հյր. Վ. Հացունի, «Ե'րբ շարադրուած են «Յանախապատում նաոմ»», Բազմավէպ, 1930 (ՁԸ), թիվ 10, էջ 402-403, Yačaxapatum Čark', Tr., Intr. by Abraham Terian, p. 22-24:

¹⁵ Հր. Անադյան, Հայոց գրերը, էջ 333-335, Կ. վրդ. Քիպարեան, Պատմության հայ հին գրականության, Վենետիկ, 1992, էջ 130, նույնի, ««Յանախապատում» նաոնու հեղինակի հարցը», Բազմավէպ, 1962 (ՃԻ), թիվ 9-12, էջ 239, 241-242:

¹⁶ Yačaxapatum Čark', Tr., Intr. by Abraham Terian, p. 6, 24-26, 298.

¹⁷ Պ. Ֆեթթեր, Հայկական աշխատասիրությունը, էջ 70, 72:

դրում է, որ ճառերի հեղինակը դեռ ընտելանում էր Աստվածաշնչի բնագրին, այլ ոչ թե տիրապետում դրան, ինչը, ըստ նրա, բնորոշ է Ե դարի երկրորդ կեսին¹⁸:

Այս խնդրի շուրջ Ա. Տերյանը բոլորովին այլ տեսակետ է առաջ քաշում: Նախ՝ ցույց է տալիս, որ աստվածաշնչյան նույն մեջբերումն անգամ կարող է տարբեր լինել, երբ հանդիպում է երկու կամ ավելի անգամ: Օրինակ՝ Մաղաքիայի մարգարեության «Դարձարուք առ իս եւ ես դառնամ առ ձեզ» հատվածը (Մաղ. Գ 7) նույնությամբ կրկնվում է «Հաճախապատումի» ԺԲ ճառում, մինչդեռ Ե ճառում ունի հետևյալ տեսքը. «Դարձարուք առ իս ի մեղաց եւ խոստովան լերուք եւ ապաշխարեցէք, եւ ես դառնամ առ ձեզ»¹⁹: Ավելին՝ ճառերում առկա սուրբգրային մեջբերումների մի մասն այնքան է ձևափոխված և ձուլված ճառերի բուն շարադրանքի հետ, որ երբեմն դրանք դժվար է տարանջատել միմյանցից, ինչը նշանակում է, որ սա թարգմանությանն ընտելանալու խնդիր չէ, ինչպես կարծել է Հացունին, ոչ էլ թարգմանության անավարտ լինելու հետևանք, այլ՝ մեջբերման համապատասխան ոճ: Հեղինակը քաջաճանոթ է եղել Սուրբ Գրքի հայերեն թարգմանությանը, սակայն ամենևին նպատակ չի ունեցել աստվածաշնչյան տեղիները ներկայացնել իբրև հիմնավորում, այլ, ըստ երևույթին, կիրառել է դրանք ավելի պատմողական, քարոզխոսական ոճի մեջ՝ ի մտի ունենալով ճառերի բարոյախրատական-ուսուցողական բնույթը:

Ճառերի բնույթն ու բովանդակության քննությունը հեղինակի ինքնության հստակեցման համար կարևորագույն հանգրվաններից են: Ուսումնասիրողների մեծ մասը գտնում է, որ ճառերն իրենց տեսակով խրատական են և ուղղված են քրիստոնեական կյանքով ապրողներին, մինչդեռ եթե հեղինակը ս. Գրիգոր Լուսավորիչը լիներ, ապա ճառերն ուղղված կլինեին նորադարձներին: Նրանք պնդում են, որ «Հաճախապատումը» չի պարունակում հեթանոսության կամ բազմաստվածության դեմ պայքարի որևէ ակնարկ, որով ս. Լուսավորիչը զբաղվել է 30 տարի²⁰: Հակառակ կարծիքն ունեն Արշակ Տեր-Միքելյանը և Արտաշես Մարտիրոսյանը, ըստ որոնց՝ ճառերն ուղղված են մասնավորապես նորադարձներին²¹:

¹⁸ Հյր. Վ. Հացունի, «Ե՞րբ շարադրում են «Յաճախապատում հառ»», էջ 403:

¹⁹ Առավել մանրամասն տե՛ս *Yačaxapatum Čark'*, Tr., Intr. by *Abraham Terian*, p. 18-21, 28:

²⁰ Ե. արք. Դուբան, Պատմության Հայ Մատենագրության, էջ 418-419, Կ. վրդ. Քիպարեան, Պատմության հայ հին գրականության, էջ 129, Գ. Ֆնտգեան, Ա. Զոպանեան, ««Յաճախապատում»ի շուրջ», էջ 84-85:

²¹ Սրբոյ հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք, հրտ., հմմտ. և ծնթգր.՝ Ա. Տեր-Միքելեանի, Վաղարշապատ, Ս. Էջմիածին, 1894, էջ Ե, Ա. Մարտիրոսյան, Մաշտոց, էջ 114:

Թեև ճառերն իրականում բարոյախրատական են, նշենք, որ վերոհիշյալ երկու ենթադրություններն էլ միանշանակ չեն, քանի որ.

ա. Ս. Գրիգոր Լուսավորիչն ուներ իր քրիստոնեական մեծ հոտը, որին արդեն նախքան մկրտելը քարոզել և ուսուցանել էր քրիստոնեական վարդապետությունը, և կարծում ենք, զարմանալի չպիտի լիներ, եթե նա տասնամյակ կամ ավելի տարիներ անց իր այդ հոտին ուղղված խրատական ճառեր ցանկանար հեղինակել²²:

բ. Եթե անգամ ճառերն ուղղված լինեին նորադարձներին, ապա չպետք է մոռանալ, որ հեթանոսական բարքեր ունեցողները միանգամից չեն փոխել իրենց սովորությունները, ինչի վառ ապացույցն է այն, որ դեռ Ե դարում սբ. Մեսրոպ Մաշտոցն անձամբ քարոզում էր նման երևույթների դեմ²³:

Այս հարցի շուրջ բոլորովին մի նոր տեսակետ է առաջ քաշում Ա. Տերյանը, որի կարծիքով, բոլոր ճառերն էլ մի նպատակ են հետապնդում՝ բարոյական պատրաստություն վանական կյանք մուտք գործելու համար, որտեղ հեղինակը հանդես է գալիս իբրև հմուտ ու հեղինակավոր վանահայր և ուսուցիչ²⁴: Նա ճառերը սկսում է Ս. Երրորդության դավանանքով (ճառ Ա-Բ), ապա մինչև վերջին ճառը խոսում մարդու բարոյական նկարագրի մասին: Նա բացատրում է, որ Աստված հայտնվում է նրանց, ովքեր լուսավորված են հավատքով և ապրում են առաքինի կյանքով (ճառ Գ): Գ-ԻԲ ճառերում հեղինակը մեծ և զգալի կարևորություն է ընծայում «մարդկային առաքինությունը» և հաճախակի խոսում հավատի, հույսի, սիրո, հեզության, հնազանդության, զգացմունքները կառավարելու, խոստովանության, զղջման, քավության, աստվածաշատության և հանապազօրյա աղոթքների մասին: Իսկ ԻԳ ճառում արդեն ուղղակիորեն խոսքը ուղղում է նրանց, «որք հրաժարեցան յաշխարհէս եւ ընծայեցին Աստուծոյ զանձինս»²⁵: Ավելին՝ ԻԳ ճառում հեղինակը բազմիցս խոսում է առաջնորդի ու եղբայրության մասին և վանքից դուրս գալու վերաբերյալ կանոն ու նզովք սահմանում.

«Նա եւ ամենայն ուղղափառ ժողովք եպիսկոպոսաց՝ որ զուղղափառ հա-

²² Ագաթանգեղեայ պատմություն, հտժ. ԻԲ, էջ 1416-1424, հտժ. ՃԺԸ, էջ 1700-1701, Հաճախապատում ճառք, հրտ.՝ Ա. Տեր-Միքելեանի, էջ Է-Ժ:

²³ Հմմտ. Ի յիշատակ պատմության վարուց երանելոյ սուրբ վարդապետին Մեսրոպբայ գոր ասացեալ է նորին աշակերտի Կորեան (բնագիր Գ, տառնակնեան տարբերակ) (ՄՀ, Ա. հատոր, Ե դար), Անթիլիաս-Լիբանան, 2003 (Փարիզի Ազգային Մատենադարան, հայերէն ձեռ. քիւ 178². Տօնական ժողովածու. Ժամանակ՝ ԺԲ դար), հ. 11-12, էջ 264, Մ. Աբեղյան, Երկեր. Գ, էջ 139-140:

²⁴ Yačaxapatum Čark', Tr., Intr. by *Abraham Terian*, p. 29-30, 50-51.

²⁵ Ճառերի փոխկապակցվածության և դրանցով ընթերցողին վանական կյանքին նախապատրաստելու մասին մանրամասն տե՛ս Yačaxapatum Čark', Tr., Intr. by *Abraham Terian*, p. 27-41:

ւատսն հաստատեցին եւ կանոն սահմանեցին եկեղեցւոյ, եւ զայս սահմանեցին նզովիւք. եղբայր ոք, ասէ, մի՛ իշխեսցէ ի վանացն ելանել կալ ուր եւ կամեսցի առանց կամաց վերակացուին եւ եղբայրութեանն. եւ որ ոք յանդգնեալ զայս առնէ, ընդ նզովիւք կապեսցի ի հարցն: Զի «ամենայն ոք յոր ինչ կոչեցան՝ ի նոյնն կայցէ» (Հմմտ. Ա. Կորնթ. է 20), ասէ առաքեալն Աստուծոյ: Զի ամենեքեան ի մի յոյս կոչեցան ի Քրիստոս. զի մի մարմին պատուական ի սուրբ մարմնոյ նորա եւ յարենէ պատսպարեցան ի փառատրութիւն: Ապա եթէ ունի ինչ պատճառս մեկուսանալոյ, մի՛ ծածկեսցէ յառաջնորդէն եւ յեղբայրութեանն»²⁶:

Ըստ Հ. Կյուրեղ Քիպարյանի և Վ. Հացունու՝ այս կանոնն ու նզովքը միայն Քաղկեդոնի ժողովի կանոնների Դ հոդվածի մեջ են և գոյություն չունի ուրիշ «եպիսկոպոսների ժողով»²⁷, որն ունենա դրանք միասին, ինչից էլ հետևում է, որ ճառերը չէին կարող կազմված լինել 451 թվականից առաջ²⁸: Ընդհակառակը՝ ճառերը գրվել են Քաղկեդոնի ժողովից շատ ավելի ուշ, քանի որ ինչպես վկայակոչում է Ա. Տերյանը, ճառում հեղինակն օգտագործել է նաև ս. Բարսեղ Կեսարացու կանոնների հայերեն թարգմանությունը, որը թվագրվում է Զ դարասկզբով²⁹: Թեև չի բացառվում, որ հեղինակը կարող էր օգտվել Կեսարացու ասորերեն մի կորած թարգմանությունից, բայց և այնպես ճառերի վրա Զ դարի կնիքը մնում է, քանի որ հեղինակն օգտվել է նաև Կեղծ Դիոնիսիոս Արեոպագացու տեքստերից և Հերմես Նոամեծին վերագրված տեքստերի հայերեն թարգմանությունից, որոնք ևս առաջ են եկել Զ դարում³⁰:

²⁶ Ճառս Յաճախապատումս, հատ ԻԳ, հ. 58-61, էջ 132:

²⁷ «Ամենայն ուղղափառ ժողովք եպիսկոպոսաց» (Ճառս Յաճախապատումս, հատ ԻԳ, հ. 58, էջ 132) արտահայտությունը առիթ է տվել կարծելու, որ դրվագը խոսում է «տիեզերաժողովների» մասին, սակայն ինչպես նշում է Կ. Քիպարյանը՝ ո՛չ Նիկիայի, ո՛չ Կ. Պոլսի և ո՛չ էլ եփեսոսի տիեզերաժողովների ժամանակ վանական կյանքի մասին որևէ կանոն չի ընդունվել, ուստի խոսքը տիեզերաժողովների մասին չի կարող լինել (տե՛ս Կ. Վրդ. Քիպարեան, ««Յաճախապատում» հատերու հեղինակի հարցը», էջ 238):

²⁸ Կ. Վրդ. Քիպարեան, Պատմութիւն հայ հին գրականութեան, էջ 130, նույնի, ««Յաճախապատում» հատերու հեղինակի հարցը», էջ 239, Հյր. Վ. Հացունի, «Ե՞րբ շարադրուած են «Յաճախապատում հաոբ»», էջ 403-404:

Կանոնների պահպանված հայերեն հնագույն թարգմանությունն իր վրա կրում է ԺԱ-ԺԲ դդ. կնիքը (տե՛ս Ա. Բոգոյան, «Քաղկեդոնի տիեզերական ժողովի կանոնների միջնադարյան հայկական թարգմանությունը», էջմիածին, 2016 (ՀԳ), թիվ Բ, էջ 13, 15-17: Հայերեն և հունարեն բնագրերը տե՛ս նույն տեղում, էջ 24-47):

²⁹ *Yačaxapatum Čark'*, Tr., Intr. by *Abraham Terian*, p. 6, 9-11, 23-24, 43-45, հմմտ. *Gabriella Uluhogian*, *Basilio di Cesarea: Il libro delle domande* (Le Regole), CSCO 536-537, *Scriptores Armeniaci* 19-20 (Leuven: Peeters, 1993), tomus 20, viii-ix.

³⁰ *Yačaxapatum Čark'*, Tr., Intr. by *Abraham Terian*, p. 295: Այլ աղբյուրությունների մասին տե՛ս նույն տեղում, էջ 9, 16, Յաճախապատում ճառք, հրտ.՝ Ա. Տեր-Միքելեանի, էջ է, Հյր. Գր. Գալեֆեարեան, «Նորագույն աղբերի եզնկայ Կողբացոյ», ՀԱ, 1893 (Ե), թիվ 10, էջ 293, Պ. Յեթթեր, Հայկական աշխատասիրութիւնք, էջ 202, Հր. Աճառյան, Հայոց գրերը, էջ 335-338, Կ.

Ա. Տերյանի արժեքավոր այս ուսումնասիրությունը կարծես թե կասկածից վեր է թողնում այն, որ ո՛չ ս. Գրիգոր Լուսավորիչը, ո՛չ էլ ս. Մեսրոպ Մաշտոցը չեն հեղինակել մեզ հայտնի «Հաճախապատում ճառերը»³¹, ինչի համար հիմք է հանդսանում ճառերի լեզվի, ոճի, օգտագործված աղբյուրների, բնույթի ու բովանդակության վերաբերյալ գիտնականի կատարած քննությունը: Հաշվի առնելով, որ մեզ հասած «Հաճախապատում ճառերը», ինչպես երևում է, կազմվել են (եթե ոչ գրվել) Զ դարում՝ տրամաբանական է թվում նաև Տերյանի այն տեսակետը, որ հեղինակը եղել է Զ դարում ապրող մի վանահայր, թեև նրա ինքնության հարցը մնում է անորոշ:

Ի հավելումն Ա. Տերյանի այս եզրակացությունների, հարկ ենք համարում կատարել նաև հետևյալ դիտարկումները.

1. Ըստ եղիշե պատրիարք Դուրյանի՝ մինչև ԺԳ դար բոլոր հեղինակները (բացի Գրիգոր Սարկավագապետից) Լուսավորչի «ճառերի» մասին խեսելիս նկատի են ունեցել «Սբ. Գրիգորի վարդապետությունը»³²: Թեև մենք համաձայն չենք Դուրյանի բոլոր եզրահանգումների հետ, քանի որ նա հաճախ իր տեսակետները ներկայացնում է առանց որևէ հիմնավորված (ինչպես օրինակ՝ Գրիգոր Սարկավագապետի վկայությունը թվագրում է ԺԲ-ԺԳ դարերով, մինչդեռ ընդունված տարբերակը Ը դարասկիզբն է³³), այնուամենայնիվ, պետք է ընդունենք, որ միջնադարյան վկայությունների մասին նա մասամբ իրավացի է:

Վրդ. Քիպարեան, ««Յանախապատում» հատերու հեղինակի հարցը», էջ 241, **Ա. Զամինեան**, Հայոց եկեղեցու պատմություն, Ա մաս, Նոր-Նախիջևան, 1908, էջ 90, **Հյր. Վ. Հացունի**, «Ե՛րբ շարադրում եմ «Յանախապատում հատ»», էջ 403-404, **Սուրբ Գրիգորի** Վարդապետությունը, քաղվ. գրաբարից, առաջ. և ծանոթ.՝ Ս. Արևշատյանի, Ս. Էջմիածին, 2007:

³¹ Թեև չի բացառվում, որ նրանց մոտերը կարող են և օգտագործված լինել հատերում: Այս տեսակետի համար կարող է հիմք հանդիսանալ այն, որ հատերը մեծապես ազդված են «Վարդապետություն սրբոյն Գրիգորի» երկից, որի հեղինակությունը տարբեր ուսումնասիրողների կողմից ընծայվում է սբ. Մեսրոպ Մաշտոցին (տե՛ս *Yačaxapatum Cařk*, Tr., Intr. by *Abraham Terian*, p. 9-10, Հյր. Բ. Սարգիսեան, Ազաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքն, մաս Բ, էջ 359-408, Ն. Ակինեան, Մաշտոց վարդապետ Հացեկացի, ՀԱ, 1935 (ԽԹ), թիվ 10-12, Վիեննա, Մխիթարեան, էջ 544-545, **Նույնի**, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, 219-249 (Մահուան 1700-ամեակի առիթով)», ՀԱ, 1949 (ԿԳ), թիվ 4-12, Վիեննա, Մխիթարեան, էջ 12, **Ա. Մուշեղյան**, «Կորյուն քե՞ Ազաթանգեղոս. բնագրերի էմնություն նոր տեսանկյունից», ԼԶԳ, 1996, թիվ 2, էջ 51, **Սուրբ Գրիգորի** Վարդապետությունը, քաղվ.՝ Ս. Արևշատյանի, էջ 10, հակառակ տեսակետի համար տե՛ս **3. Տաշեան**, «Ազաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքը [Քննադատություն Բ. Սարգսյանի համանուն երկի]», ՀԱ, 1891 (Ե), թիվ 8, Վիեննա, Մխիթարեան, էջ 350, **Հր. Անադյան**, Հայոց գրերը, էջ 330-331, **Ն. Աղոնց**, Գրիգոր Լուսավորիչ և Անակ Պարթև, Երկեր, հ. Ա. Պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան, ԵՊՀ հրատ., 2006, էջ 170):

³² **Ե. արք. Դուրեան**, Պատմություն Հայ Մատենագրություն, էջ 415-417:

³³ **Հյր. Բ. Սարգիսեան**, «Գրիգոր Սարկավագապետ, Գրիչ Զ. դարու եւ հորենացոյ հետ ունեցած անոր աղերսը», Բազմավէպ, 1904 (ԿԲ), թիվ 3, էջ 123, 126:

Քննելով *Ե-Թ* դդ. թվագրվող բնագրերը՝ մենք տեսնում ենք, որ ս. Գրիգոր Լուսավորիչը վկայակոչվել է 12 հեղինակների կողմից, որոնք ընդհանուր հաշվով կատարել են 38 մեջբերում: Վերջիններից ընդամենը երեքն են արված «Հաճախապատում ճառերից»․ մեկը՝ Կոմիտաս Ա Աղցեցու կողմից (է դ․), երկուսը՝ Գրիգոր Սարկավագապետի (Ը դդ․)³⁴։ Մնացյալ բոլոր մեջբերումները «Ագաթանգեղոսի պատմությունից» (գերակշռող մասը՝ «Սբ. Գրիգորի Վարդապետությունից») են³⁵։ Այս 12-ի կողքին Ե դարի մատենագիրների մոտ կան նաև մեջ-

³⁴ «Հաճախապատում ճառերից» արված մեջբերումները տե՛ս Գրիգորի Սարկավագապետի եւ ճգնաւորի խաւք ի ս. Գրիգոր Լուսաւորիչ ասացեալ ի սուրբ քաղաքն յերուսաղէմ (ՄՀ, Թ հատոր, Թ դար), Անթիլիաս-Լիբանան, 2008, յաւելուած, հ. 17, էջ 1060, հ. 49, էջ 1064, Կնիք հաւատոյ, հ. 1-19, էջ 59-62:

³⁵ «Ագաթանգեղոսի պատմությունից» արված մեջբերումները տե՛ս Յաղագս պատկերամարտից [ի Վրթանիսէ Քերթովէ], հ. 27, էջ 495, Կնիք հաւատոյ, հ. 1-63, էջ 150-158, հ. 1-5, էջ 225, հ. 1-5, էջ 231, հ. 1-4, էջ 234, հ. 1-12, էջ 261-262, նույն տեղում, Երանելոյն Յովհաննու Մայրապոմեցոյ ի հաւատոյ բանէն, հ. 13, էջ 280, Թուղթ Կոմիտասայ Հայոց Կաթողիկոսի ի Պարսս (ՄՀ, Դ հատոր, է դար) Անթիլիաս-Լիբանան, 2005, հ. 14-15, էջ 328, [Յովհաննու Մայրավանցոյ] Վերլուծութիւն Կաթողիկէ եկեղեցւոյ եւ որ ի նմա յարինեալ կարգաց (ՄՀ, հ. Դ, է դար) Անթիլիաս-Լիբանան, 2005, հ. 30, 35, 37, էջ 351, հ. 52-53, էջ 352, հ. 61, էջ 353, հ. 65, էջ 354, Պատմութիւն Սեբեոսի (ՄՀ, հ. Դ, է դար) Անթիլիաս-Լիբանան, 2005, գլ. ԽԶ, հ. 84-85, էջ 545, Անանիայի Շիրակայնոյ Համարողի ասացեալ ի Զատիկն Տեառն (ՄՀ, հ. Դ, է դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, հ. 21, էջ 678, Անանիայի Շիրակայնոյ առ խոստացեալսն, [ընդարձակ եւ համառօտ խմբագրութիւն] (ՄՀ, Դ հատոր, է դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, ընդարձակ խմբագրութիւն, գլ. Բ, հ. 50, էջ 715, համառօտ խմբագրութիւն, գլ. Ա, հ. 22, էջ 750, Անանուն, [684 թուականի պատմութիւն] (ՄՀ, հ. Ե, է դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, գլ. Խ, հ. 19, էջ 873-874, Երանելոյն Թէոդորոսի ընդդէմ Մայրագումացոյն (ՄՀ, հ. Ե, է դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, հ. 79, էջ 1247, [Ստեփանոսի Սիւնեաց Եպիսկոպոսի] Վասն անապականութեան մարմնոյն, որք ասեն թէ՛ որ աճէ եւ նուազէ, ապականացու է: Եւ վասն զի մարմինն Քրիստոսի աճէր եւ զարգանայր, եւ ապականացու ոչ էր, զի Աստուծոյ մարմին էր՝ վկայութիւնք սրբոց եւ աստուածազանից, որք անապական խոստովանին յարգանդէ եւ յաւիտեանս յաւիտենից (ՄՀ, Զ հատոր, Ը դար), Անթիլիաս-Լիբանան, 2007, գլ. Բ, հ. 5, էջ 442, Ժամակարգութեան մեկնութիւն ընդարձակ եւ համառաւտ Ստեփանոսի Սիւնեաց Եպիսկոպոսի (ՄՀ, հ. Զ, Ը դար), Անթիլիաս-Լիբանան, 2007, ընդարձակ, գլ. Ե, հ. 3, էջ 466, համառաւտ (Պատճառ աղաւթիցն [Ստեփանոսի Սիւնեաց Եպիսկոպոսի]), գլ. Ե, հ. 1-2, էջ 483, Ստեփանոսի Սիւնեաց Եպիսկոպոսի եւ ալլոց վարդապետաց ի խորհուրդ եկեղեցւոյ (ՄՀ, հ. Զ, Ը դար), Անթիլիաս-Լիբանան, 2007, հ. 95, էջ 498, Ստեփանոսի Սիւնեաց Եպիսկոպոսի, Մեծի Իմաստասիրի, պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի, զոր վասն հաւատոյ գրեալն էր (ՄՀ, հ. Զ, Ը դար), Անթիլիաս-Լիբանան, 2007, հ. 53, էջ 549, Խոսրովկայ Թարգմանչի Հայոց առ այնոսիկ որ ասեն բնութեամբ անձեւ անսկիզբն ընկալեալ մարդկութիւն Աստուած Բան ի Կուէն (ՄՀ, հ. Զ, Ը դար), Անթիլիաս-Լիբանան, 2007, գլ. Դ, հ. 109, էջ 674, հ. 175-176, էջ 680, Նորին [Յովհաննու Իմաստասիրի] ընդդէմ երեւութականաց (ՄՀ, հ. Ե, Ը դար), Անթիլիաս-Լիբանան, 2007, հ. 26, էջ 46, հ. 39, էջ 47, Նորին Տեառն Յովհաննի Իմաստասիրի յաղագս կարգաց եկեղեցւոյ Քրիստոսի (ՄՀ, է հատոր, Ը դար), Անթիլիաս-Լիբանան, 2007, հ. 74, էջ 74, Յովհաննու Իմաստասիրի Հայոց Կաթողիկոսի սակս ժողովոց, որ եղեն ի Հայք (ՄՀ, է հատոր, Ը դար), Անթիլիաս-Լիբանան, 2007, հ. 23-24, էջ 125, Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու Վերծանալի, որ եղեն ի Հայք (ՄՀ, հ. Ե, Ը դար), Անթիլիաս-Լիբանան,

բերումներ, որոնց համապատասխան դրվագը չկա ո՛չ «Հաճախապատում ճառերում» և ո՛չ էլ «Սբ. Գրիգորի Վարդապետության» մեջ³⁶:

Կարևոր հանգամանք է նաև, որ թե՛ Գրիգոր Սարկավագապետի և թե՛ Կոմիտաս Ա Աղցեցու մոտ «Հաճախապատում ճառերից» կատարված մեջբերումները բավականին տարբեր են մեզ հասած ճառերի համապատասխան դրվագներից, մինչդեռ Կոմիտաս կաթողիկոսի «Սբ. Գրիգորի Վարդապետությունից» կատարված վեց մեջբերումները՝ գրեթե բառացի կրկնությունն են: Ստացվում է, որ է դարում հայտնի տարբերակը և մեզ հասած ճառերը տարբերվում են իրարից, ինչը նշանակում է, որ դրանք է-ԺԳ դդ. միջև ենթարկվել են խմբագրության:

2. Վերջին շրջանի գիտնականներից Հրաչյա Թամրազյանը կրկին վկայակոչում է Պ. Ֆեթթերի դիտարկումները՝ համակարծիք լինելով նրա այն տեսակետին, որ ճառերի հեղինակը եղել է ս. Մեսրոպ Մաշտոցը³⁷:

Թամրազյանը կարծում է, թե «Հաճախապատում ճառերի» ներքին բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում է սբ. Կորյունի ներկայացրած՝ ս. Մեսրոպի գործունեության նկարագրությանը: Հիմնվելով Բ ճառում գրված «ուսանել գիտել ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ»³⁸ և մի քանի այլ հատվածների վրա, որտեղ խոսվում է «իմաստության» կամ «խրատի» մասին, նա առաջ է քաշում այն տեսակետը, որ ս. Մեսրոպի թարգմանած առաջին նախադասությունը. «ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ ...» (Առակ. Ա 1) «բնաբան» է հանդիսանում ողջ «Հաճախապատումի» համար, որտեղ «բազմիցս» ընդգծվում է իմաստության, խրատի և արվեստի դերը³⁹: Սակայն ճառերի կապը Առակաց գրքի հետ այդքան էլ սերտ չէ, ինչպես ենթադրում է գիտնականը: Ճա-

2007, հ. 122, էջ 164, Պատասխանի թղթոյն Փոտայ. գրեալ Սահակայ Հայոց Վարդապետի, հրամանաւ Աշոտայ Հայոց Իշխանաց Իշխանի (ՄՀ, հ. Թ, Թ դար), Անթիլիաս-Լիբանան, 2008, հ. 67-69, էջ 369, Բացայայտութիւն համաձայն աստուածաբանութեան հոգեւոր հարցն սրբոց ըստ առաքելասահման աւանդիցն եկեղեցւոյ Քրիստոսի, հանդերձ հաւատաբանութեամբ ճշմարիտ ուղղափառ դաւանութեան հայաստանեայց, ասացեալ սրբոյ վարդապետին Սահակայ Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Թարգմանչի ընդդէմ երկաբնակաց նեստորականացն (ՄՀ, հ. Թ, Թ դար), Անթիլիաս-Լիբանան, 2008, հ. 52-60, էջ 377-378, հ. 86, էջ 380-381, հ. 163-165, էջ 386-387, հ. 396, էջ 404:

³⁶ Թուղթ Գիտայ Եպիսկոպոսի առ Սուրբն Վաչէ (ՄՀ, հ. Ա, Ե դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, հ. 13-14, էջ 1080: Մամբրէի Վերծանողի ծառք (ՄՀ, հ. Ա, Ե դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, հառ Բ, հ. 211-216, էջ 1117: Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Ա դրգ., գլ. ԺԳ, հ. 14, էջ 2219:

³⁷ Տերյանի դիտարկումները Ֆեթթերի փաստարկների վերաբերյալ տե՛ս *Yačaxapatum Čarġ*, Tr., Intr. by *Abraham Terian*, p. 47-51:

³⁸ Ճառս Յաճախապատումս, հառ Բ, հ. 114, էջ 14:

³⁹ Հր. Թամրազյան, «Ստեղծագործ աննատի և արվեստի տեսության խնդիրները Մեսրոպ Մաշտոցի «Հաճախապատում ճառերում»», *ԲՄ*, 2012 (հ. 19), էջ 9-11, 13:

ներում օգտագործված ավելի քան 300 սուրբգրային մեջբերումներից ընդամենը երկուսն են Առակաց գրիքից⁴⁰, և ասել, որ Առակաց գրքում արծարծված գաղափարները ընկած են «Հաճախապատում ճառերի» հիմքում, իսկ դրանից մի տող՝ «բնաբան» է հանդիսանում ողջ «Հաճախապատումի» համար, կարծում ենք այնքան էլ ճշգրիտ չէ: Առավել ևս, երբ ի մտի ենք ունենում այն, որ ճառերի լեզուն ու ոճը չեն համապատասխանում սբ. Մեսրոպի և իր թարգմանած Առակաց գրքի լեզվին⁴¹ և Հր. Թամրազյանն էլ որևէ կերպ չի արձագանքում իրենից առաջ գրած գիտնականների այդ պնդմանը:

Ինչ վերաբերվում է Պ. Ֆեթթերի դիտարկումներին, ապա նա ճառերից վերցնելով որոշ դրվագներ՝ քննության է առնում դրանք, կտրելով համատեքստից, ինչի արդյունքում էլ հանգում է սխալ եզրակացությունների: Օրինակ՝ հիմք ընդունելով Դ ճառում «զհուր եւ զշուր» պաշտողներին անդրադառնալը, Լ ճառում հույների հետ համեմատած պարսիկներին «խուժադուժ ազգ» անվանելը և ամենուր աշխարհի (նաև սատանայի) արարումը որպես Աստծո կողմից իրականացված իրողության շեշտադրումը՝ գերմանացի հայագետը կարծում է, որ ճառերի հեղինակը պայքարում է գրադաշտության դեմ⁴²:

Միևնույն ժամանակ, Լ ճառի նույն դրվագի վրա հիմնվելով Արշակ Տեր-Միքելյանը նույնպես նմանատիպ մի ենթադրություն է անում և շեշտում, որ ճառերի գրության ժամանակ հույները դեռևս հեթանոս էին («ոչ ծանեան զԱստուած»), ինչը հիմք է համարում ճառերի հեղինակությանը ս. Գրիգորին ընծայելու համար⁴³:

Խոսքը հետևյալ հատվածի մասին է.

«Նա եւ պարսիկք եւ այլ խուժադուժ ազգք, որ ոչ գիտեն զաւրէնս, «բնութեամբ զաւրինացն գործեն» (Հռոմ. Բ 14) ըստ առաքելոյ բանին, եւ ի ձեռն դատաւորաց պատժեն զպիղծս եւ զանիրաւս: ... Դոյն աւրինակ եւ Յոյնք գրով կարգեալ ունին զիրաւունս. երախտաւորացն եւ մտերմիցն պարգեւաւք եւ մեծարանաւք պատուեն. իսկ զանաւրէնս եւ զանհնազանդս եւ զամբարհաւաճս եւ զանառակս եւ պիղծս պատուհասիւք եւ պատժովք եւ դառն նեղութեամբք նեղեն ... Թէպէտ եւ ոչ ծանեան զԱստուած եւ փառաւորեցին կամ գոհացան, զի ոչ ընդ-

⁴⁰ Ճառս Յաճախապատումս, հատ ԺԳ, Բ. 74, էջ 91, հատ ԻԱ, Բ. 17, էջ 125: Աստվածաշնչյան այլ իմաստասիրական գրքերից (ի բաց առյալ Սաղմոսաց գիրքը) առկա են ընդամենը մեկ մեջբերում ժողովող գրից, և երկու՝ Իմաստոսություն Սողոմոնի երկրորդականոն գրից (տե՛ս նույն տեղում, հատ ԺԵ, Բ. 57, էջ 98, հատ ԺԲ, Բ. 78, էջ 85 (նույն մեջբերումը նաև հատ ԺԳ, Բ. 53, էջ 90, հատ ԺԸ, Բ. 21, էջ 105) հմմտ. *Yačaxapatum Čark'*, Tr., Intr. by *Abraham Terian*, Index of Holy Scripture, p. 320-323:

⁴¹ Գ. Ֆետտեան, Ա. Զոպանեան, ««Յաճախապատում»ի շուրջ», էջ 86-88:

⁴² Պ. Ֆեթթեր, Հայկական աշխատասիրությունք, էջ 71:

⁴³ Յաճախապատում ճառք, հրտ.՝ Ա. Տեր-Միքելեանի, էջ է:

րեցին զԱստուած ունել ի գիտութեան. «այլ նանրացան ի խորհուրդս իւրեանց եւ խաւարեցան անմտութեամբ (Հռոմ. Ա 21)»⁴⁴:

Եւ Ֆեթթերի, և՛ Տեր-Միքելյանի ենթադրությունները սխալ են, քանի որ երկուսն էլ դիտարկում են մեջբերված տողերը համատեքստից դուրս: Այստեղ ո՛չ պարսիկներն են հույների հետ համեմատություն մեջ դրվում, ո՛չ էլ հույներն են հեթանոս համարվում, այլ երկու ազգերն էլ ներկայացվում են իբրև օրինակ ճառի բուն թեմայի շարադրման մեջ: Հեղինակը ողջ ճառի ընթացքում խոսելով աստվածգիտության և մեղքից հեռու մնալու մասին, ներկայացնում է Աստծո տված կարգերի ընկալման տարբեր եղանակները: Ըստ այսմ, մեզ՝ քրիստոնյաներիս, դրանք ուսուցանվել են գրավոր կերպով՝ մարգարեների, առաքյալների և վարդապետների միջոցով:

«Այլ եւ վկայութիւնք լաւութեանն որ մտերիմ է անձնիշխան կամաւք ի վարդապետութիւն Հոգւոյն Սրբոյ, որ ի ձեռն մարգարէից եւ առաքելոց եւ վարդապետաց գրով աւանդեցին մեզ. զի ծանիցուք զԱստուած՝ զերախտաւորն, զարդարն, զբարերարն, զսուրբն, զճշմարիտն. եւ մերժել եւ հեռանալ ի դժնդակ վարուց, յապախտաւոր եւ յանհաւան յանխրատ եւ անխտիր անաւրէնութենէ, եւ սրբել ի մտաց եւ մարմնոց զվնասակար զամբարշտութիւնսն միշտ»⁴⁵:

Այս նույն թեմայի շրջանակներում է հեղինակը մատնանշում այն հանգամանքը, որ պարսիկները ևս, ըստ բնության օրենքի, ունեցել են բարին ու չարը տարբերակելու և այսպիսով Աստծուն հաղորդ լինելու հնարավորությունը: Նույնկերպ և հույները՝ գրավոր եղանակով⁴⁶, և մնացյալ բոլոր ազգերը՝ Աստծո «նախախնամութեամբ», այսինքն՝ նախապես որոշված տնօրինությունամբ, ստացել են մեղքից և անիրավությունից հեռու մնալու կարգը, թեև նրանք չեն ընտրել աստվածգիտությունը:

«Նոյնպէս եւ ամենայն ազգք եթէ ոչ կայցեն յիրաւունս արդար դատաստանին Աստուծոյ ... զի չիք ազգք որ ոչ իցեն իրաւունք ի դատաւորաց: Եւ այս ամենայն կարգք ի շինութիւն աշխարհի կարգեալ են ի Տեառնէ ըստ նախախնամութեանն որ առ ազգս մարդկան. թէպէտ եւ ոչ ծանեան զԱստուած եւ փառաւորեցին կամ գոհացան, զի ոչ ընդրեցին զԱստուած ունել ի գիտութեան. «այլ նանրացան ի խորհուրդս իւրեանց եւ խաւարեցան անմտութեամբ (Հռոմ. Ա 21)»⁴⁷:

Հետևաբար՝ հեղինակն այստեղ չի խոսում պարսիկների կամ հույների քա-

⁴⁴ Ճառս Յաճախապատումս, հատ Բ, հ. 91, 95, 98, էջ 50:

⁴⁵ Նույն տեղում, հատ Բ, հ. 90, էջ 50:

⁴⁶ Ըստ Ա. Տերյանի՝ ճառերի հեղինակը մեջբերում է անում Արիստոտելի «Նիկոմախյան բարոյագիտություն» (*Nicomachean Ethics*, Book V) երկից, որտեղ նա, խոսելով գրավոր և բնության օրենքներով դատեր իրականացնելու մասին, բերում է իրենց և պարսիկների օրինակը, ինչը և արտացոլված է «Հաճախապատումի» վերոհիշյալ դրվագում (Տե՛ս *Yačaxapatum Carik*, Tr., Intr. by *Abraham Terian*, p. 48-49):

⁴⁷ Ճառս Յաճախապատումս, հատ Բ, հ. 96-98, էջ 50:

ղաքակիրթ կամ բարբարոս (խուժադուժ), քրիստոնյա կամ հեթանոս լինելու մասին, այլ նրանք և մնացյալ բոլոր ազգերը բերվում են իբրև օրինակ այն բանի, որ նախապես, անգամ առանց աստվածգիտության, Աստծուց ստացել են առաքինին և դժնդակը տարբերելու օրենքը:

Խնդիրը նույնն է նաև Ֆեթթերի ներկայացրած մնացյալ բոլոր փաստարկների պարագային: Այսպիսով Դ ճառում հեղինակն ընդհանուր առմամբ խոսում է ոչ թե հուր և ջուր պաշտողների մասին, ինչպես կարծում է Ֆեթթերը, այլ՝ Աստծո արարչության, որի շրջանակներում էլ անդրադառնում է, որ ոմանք բնությունը և բոլոր տարրերը (ոչ միայն հուրը և ջուրը) ինքնագո աստվածներ են համարել, մինչդեռ դրանք ստեղծված են Աստծո կողմից.

«Զի գտարերս ամենայն աստուածս արարին, զշնչաւորս եւ զանշունչս, զջուր եւ զհուր: Զի ջուրն ի պէտս կենդանեաց արարան յԱստուծոյ, որ արբուցանեն զերկիր. եւ դարձեալ ապականին նեխելով եւ նուազելով: Եւ հուր առ ի պէտս մեր արարաւ, որ դարմանաւք վառի եւ սպասաւորէ մեզ. եւ ի պակասել կերոյն, շիջանի եւ ապականի: Նոյնպէս եւ հողմք եւ ամպք ի պէտս եւս այլ արարածոց արարան, եւ ոչ ինքեանք եղեն. եւ ապականացուք են յորդորելով եւ պակասելով աւգտել եւ վնասել, զիւրեանց տկարութիւնն ցուցանելով: Եւ երկինք եւ երկիր ոչ ինքնին եղեալք, եւ որ ի նոսա զեռունք իցեն եւ անշունչք, այլ յԱստուծոյ արարան, եւ ապականացուք են»⁴⁸:

Իսկ բնության և տարրերի պաշտամունքը եղել է դեռևս հեթանոսական Հայաստանում⁴⁹:

Սատանայի՜ Աստծո կողմից արարված լինելու մասին հիմքերն էլ ընկած են Աստվածաշնչում (իբրև բարի հրեշտակ): Դ դարի եկեղեցական հայրերից սբ. Աթանաս Ալեքսանդրացին, ս. Կյուրեղ Երուսաղեմացին, ս. Բարսեղ Կեսարացին և ս. Գրիգոր Աստվածաբանն իրենց գրվածքներում արդեն իսկ խոսել են այդ մասին⁵⁰, հետևաբար ասել, որ բոլոր նրանք, ովքեր խոսում են սատանայի՜ Աստծո կողմից ստեղծված լինելու մասին, խոսում են զրադաշտության մասին՝ անհիմն է:

Նույն խնդրին հանդիպում ենք նաև «Հաճախապատումի» Ի ճառի երկու դրվագների պարագային, որոնցից մեկում խոսվում է վարդապետությունից շեղվածների մասին, իսկ մյուսում՝ «Արշակունի գահակալի հանդեպ բացասական ու պարսավական վերաբերմունքի».

ա. «Եւ ապստամբեալք ի մերոց եւ ամբարշտեալք ի բանէն որ աշակերտե-

⁴⁸ Նույն տեղում, հառ Դ, հ. 39-43, էջ 21:

⁴⁹ Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1910, էջ 31-161:

⁵⁰ Hilarion Alfeyev (Metropolitan), Orthodox Christianity Volume II: Doctrine and Teaching of the Orthodox Church, Translated from the Russian by Andrew Smith, SVS Press, 2012, p. 207, 143, 210.

ցաք զճշմարտութիւնն, ատարացան եւ յետս կացին. որպէս քուրմք եւ կախարդք եւ այլ եւս չարք»⁵¹,

բ. «Զի ի Հայս ոչ ինչ մեծագոյն եւ ի Պարս՝ քան զԱրշակունեաց տոհմ. որ եւ յԱբրահամէ սերեցան աստ, նա եւ յամենայն ազգս թագաւորք երկրի ըստ անսուտ բանին Տեառն ամենեցուն: Այլ եթէ ոչ զգաստանայցեն ի բարի, աւելի պատուհաս ընկալցին ի Տեառնէ: Եւ ծառայք նոցա որ հաճոյ եղեն Աստուծոյ, թագաւորեալք փառաւորեսցին ի Տեառնէ. եւ նոքա պարտաւորեալք յաղագս մեղաց պատժեսցին յարդար իրաւանցն»⁵²:

Ֆեթթերը (որին հետեւում են նաև Ե. Դուրյանն ու Մ. Աբեղյանը) պնդում է, որ նման պատմական իրավիճակները հատուկ են մաշտոցյան շրջանին, երբ գահ է բարձրանում Արշակունյաց տոհմից մի «անարժան իշխան», որը կարող էր լինել միայն թագավորութւյան անկման շրջանի վերջին պայազատ Արտաշեսը (422-428)⁵³: Մինչդեռ ճշմարիտ վարդապետութւյունից հեռացողները եղել են յուրաքանչյուր ժամանակաշրջանում, իսկ «թագավորի վարքագծի» վերաբերյալ ճառերի հեղինակը պարզապէս հետհայացք է գցում՝ խոսում է անցյալի մասին: Սա արդեն իսկ վկայել են Հացունին և Քիպարյանը՝ մատնանշելով, որ այդ նույն դրվագում հեղինակը խոսում է նաև պարսից Արշակունիների մասին, որոնք Գ դարի սկզբին (226 թ.) արդեն կործանված են եղել⁵⁴:

Բացի այդ, Ի ճառի բուն թեման առաքինի ու անիրավ վարքը և դրանց հաջորդող հավիտենական կյանքն ու դատաստանն են: Այս թեմայի շրջանակներում է, որ Արշակունիների մասին հատվածը բերված է որպէս օրինակ, որով հեղինակն ընդգծում է, որ առաքինութւնն առավել փառավոր է, քան արքայական փառավորյալ տոհմը: Ընդ որում, դրվագի շարունակութւյան մեջ էլ երևում է, որ խոսքը ոչ թե մեկ գահակալի մասին է, այլ հոգնակի թվով անդրադարձ է կատարվում առհասարակ գահակալներին.

«Եւ այս յայտնի է, զի ոչ տոհմից փառաւորութիւն փառաւոր է առ Աստուծոյ, այլ առաքինութեան բարետոհմութիւն: Զի ի Հայս ոչ ինչ մեծագոյն եւ ի Պարս՝ քան զԱրշակունեաց տոհմ ... Այլ եթէ ոչ զգաստանայցեն ի բարի, աւելի պատու-

⁵¹ Ճառս Յաճախապատումս, հառ Ի, հ. 97, էջ 120:

⁵² Նույն տեղում, հառ Ի, հ. 164-166, էջ 124:

⁵³ Պ. Ֆեթթեր, Հայկական աշխատություններ, էջ 72-74, Ե. առք. Դուրեան, Պատմութիւն Հայ Մատենադրութեան, էջ 419, Մ. Աբեղյան, Երկեր. Գ, էջ 139:

⁵⁴ Հյր. Վ. Հացունի, «Ե՞րբ շարադրուած են «Յաճախապատում հառք»», էջ 403, Կ. վրդ. Քիպարեան, ««Յաճախապատում» հառերու հեղինակի հարցը», էջ 239:

Ֆեթթերի այս դիտարկմանը հետաքրքիր պատասխան է տվել նաև պատմաբան Արտաշես Մարտիրոսյանը (տե՛ս Ա. Մարտիրոսյան, Մաշտոց, էջ 116-118, հմմտ. Բուզանդարան Պատմութիւնք (ՄՀ, հ. Ա, Ե դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, Գ դպր., գլ. ԺԶ, հ. 5-6, էջ 345-346, Հայոց Պատմութիւն Մովսիս Խորենացոյ, հառ. Գ, գլ. ԿԳ, հ. 1-5, էջ 2101-2102, Պատմութիւն վարուց սրբոյն Մեսրոպայ Ի Կորին Վարդապետէ (բնագիր Ա), գլ. ԺԷ, հ. 24-25, էջ 246):

հաս ընկալցին ի Տեառնէ: Եւ ծառայք նոցա որ հաճոյ եղեն Աստուծոյ, թագաւորեալք փառաւորեսցին ի Տեառնէ. եւ նոքա պարտաւորեալք յաղագս մեղաց պատժեսցին յարգար իրաւանցն»⁵⁵:

3. Ճառերի բովանդակութեանը ոչ բնորոշ նման մի դիտարկում է կատարում նաև Արմենուհի Սրապյանը՝ ճառերի հեղինակութիւնը ս. Մեսրոպ Մաշտոցին վերագրելու տեսակետի հիմնավորման համար: Համաձայն Սրապյանի՝ «Հաճախապատում ճառերում» առկա «ծավալուն ու տաք պայքարը» ընդդէմ պոռնկութեան, «դժպիտ» ու «դժնդակ» վարքի, կասկածից վեր է դարձնում այն փաստը, որ ս. Գրիգորը չի կարող լինել դրա հեղինակը, քանի որ նա գրում է «Հայաստանում Դ-ե դարերում տարածված մծղնեականների անբարո» և կամ Կորյունի ձևակերպմամբ՝ «դժպատեհ», «ժանտագործ» կենցաղավարութեան դէմ⁵⁶:

Ինքնըստինքյան Ա. Սրապյանին ուղղված հարց է առաջանում: Արդյո՞ք բոլոր երկերը (այդ թվում և Աստվածաշունչը), որոնք անդրադառնում են պոռնկութեան արատավոր լինելուն, խոսում են «մծղնեական» մասին:

Բացի այս, Սրապյանը իր տեսակետը հիմնավորելու համար հիմք է ընդունում «Հաճախապատում ճառերում» «դժպիտ» ու «դժնդակ» բառերի առկայութիւնը, որոնք, ըստ նրա, նման են «մծղնեական դէմ պայքարող» Կորյունի «դժպատեհ» բառին: Սակայն, «դժպատեհ» նշանակում է «անպատեհ», որը բնորոշ է պոռնկութեանը, իսկ «դժպիտ» ու «դժնդակ»՝ «դժկամ» ու «դժժան»⁵⁷:

4. Ճառերի կազմութեան ժամանակաշրջանի և հեղինակի հարցի շուրջ դիտարկումներում իր յուրահատուկ տեղն ունի նաև ճառերում առկա դավանաբանական հատվածների քննութիւնը: Ուսումնասիրողներն արդեն իսկ նկատել են, որ ճառերի հեղինակը ծանոթ է Նիկիայի (325 թ.) և Կ. Պոլսի (381 թ.) տիեզերաժողովների Ս. Երրորդութեան և Ս. Հոգու մասին վարդապետութեանը⁵⁸: Սակայն հարցի ուսումնասիրութեան համար ոչ պակաս կարևորութիւն ունի քրիստոսաբանութեան քննութիւնը և կապը Քաղկեդոնի ժողովի (451 թ.) հետ:

Այստեղ ուսումնասիրողների մի մասը կարծում է, որ հեղինակը գրել է մինչև Քաղկեդոնի ժողովը, քանի որ ընդհանրապես չի անդրադառնում դրան և դրանում ընդունված քրիստոսաբանութեանը⁵⁹, իսկ մյուս մասը գտնում է, որ նա

⁵⁵ Ճառս Յաճախապատումս, Բաղ Ի, Բ. 163-166, էջ 124:

⁵⁶ Ա. Սրապյան, ««Յաճախապատում» Գառերի հեղինակի հարցը», Տեղեկագիր, 1962, թիվ 5, էջ 32-33:

⁵⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Բաղոր 1, Երկասիրութեամբ՝ Հյր. Գ. Աւետիքեան, Հյր. Խ. Սիւմլեան, Հյր. Մ. Աւգերեան, Վեներաիկ, 1836, էջ 643, 636:

⁵⁸ Պ. Ֆլքթե, Հայկական աշխատասիրութիւնք, էջ 70, Ե. աւր. Դուրեան, Պատմութիւն Հայ Մատենադրութեան, էջ 418:

⁵⁹ Պ. Ֆլքթե, Հայկական աշխատասիրութիւնք, էջ 71-72, Սուրբ Գրիգորի Վարդապետութիւնը, Բարգիւ. Ս. Արեշատյանի, էջ 10:

քաջածանոթ է եղել և՛ ժողովին, և՛ ընդունված աստվածաբանությունը, ինչի ապացույցն է նաև Քաղկեդոնի Դ կանոնի առկայությունը ԻԳ ճառում⁶⁰:

Իրապես ճառերում որևէ տեղ Քաղկեդոնի ժողովի մասին չի խոսվում, բայց դա դեռ չի նշանակում, որ հեղինակը ծանոթ չի եղել դրան և կամ չի տիրապետել դրանում ընդունված կամ այդ ժամանակաշրջանին բնորոշ քրիստոսաբանությունը:

Եթե ցանկանանք տեսնել «Հաճախապատում ճառերում» առկա քրիստոսաբանությունը (ի մասնավոր՝ մարդեղացման խորհրդի մասին) շատ պարփակ կերպով, ապա այն կունենա հետևյալ տեսքը.

«Որդի Աստված հագավ մարդկային բնություն՝ մարմին և հոգի, մտավորն ու բանավորը, և միավորեց այն իր հետ՝ խառնելով իր աստվածությունը⁶¹. մարմնացավ⁶² և մարդացավ⁶³՝ ունենալով աստվածախառն մարմին⁶⁴: Կրեց բոլոր կրքերը, բացի մեղքից⁶⁵»:

Հասկանալու համար քրիստոսաբանական մտքի զարգացվածության աստիճանը այստեղ բավարար է ընդամենը անդրադառնալ «հագնել» (զգենուլ) և «խառնել» եզրերին:

Երկու եզրերն էլ լայն տարածում ունեն հայ մատենագրության մեջ (այդ թվում նաև քաղկեդոնականության դեմ գրված երկերում) և թեև հանդիսանում են հայկական աստվածաբանական ավանդության ուրույն մասը՝ սկիզբ են առնում ոչ հայկական միջավայրից: Առաջինը՝ «զգենումն»-ը, լայն տարածում է

⁶⁰ Կ. վրդ. Քիպարեան, Պատմություն հայ հին գրականության, էջ 130, նույնի, ««Յանախապատում» հատերու հեղինակի հարցը», էջ 239, Հյր. Վ. Հացունի, «Ն՞րբ շարադրուած են «Յանախապատում հառ»», էջ 403-406, *Yačaxapatum Čark'*, Tr., Intr. by **Abraham Terian**, p. 49:

⁶¹ «Եւ որպէս Որդին Աստուծոյ եղեւ որդի մարդոյ եւ զգեցաւ զմեք բնութիւնս եւ կատարեաց զարդարութիւնս ամենայն հոգով եւ մարմնով» (Ճառս Յաճախապատումս, հատ Բ, հ. 140, էջ 16):

«... եւ նովին հոգով միատրեալ առ Աստուած Բանն՝ մտաւորն եւ բանաւորն, խառնեալ ի մարմին ըստ անտարանական բանին» (նույն տեղում, հատ ԺԳ, հ. 23, էջ 94):

«... զգեցաւ զնոյն մարմին եւ զհոգի, եւ խառնեաց ընդ աստուածութիւնս իւր» (նույն տեղում, հատ Ի, հ. 61, էջ 118):

⁶² «Զի մարմնացաւ Որդին Աստուծոյ կամաւ» (նույն տեղում, հատ Բ, հ. 141, էջ 16):

«... ըստ պատկերի իւրոյ արար զնա (Մնն. Ա 27), որ ըստ Քրիստոսի մարմնամալոյն է իմանալ» (նույն տեղում, հատ Դ, հ. 13, էջ 20):

⁶³ «... ըստ Քրիստոսի մարդանալոյն» (նույն տեղում, հատ ԻԲ, հ. 37, էջ 127):

⁶⁴ «... պահով պնդեալ աստուածախառն մարմնովն ընդդէմ թշնամոյն զպատերազմն առնէր» (նույն տեղում, հատ Թ, հ. 68, էջ 55):

⁶⁵ «... յանձն էառ զամենայն կարիս մարդկային բնութեանս մեռոյ բայց ի մեղաց» (նույն տեղում, հատ Բ, հ. 141, էջ 16):

«... կրեաց զամենայն կիրս մարմնոյ եւ հոգոյ բաց ի մեղաց» (նույն տեղում, հատ ԺԳ, հ. 24, էջ 94):

«... զամենայն կիրս մարդկայինս կրեաց բաց ի մեղաց» (նույն տեղում, հատ Ի, հ. 61, էջ 118):

ունեցել ասորական աստվածաբանական մատենագրության մեջ (ի մասնավորի՝ Ափրահատ Պարսիկի (280-345) և ս. Եփրեմ Ասորու (306-373) երկերում), և հավասարագոր է եղել «մարմնացում» եզրին և դրա ուղղափառ ընկալմանը⁶⁶: Երկրորդը՝ «խառնումն»-ը լայն տարածում է ունեցել Կապադովկյան հայրերի (Գրգար) և սբ. Կյուրեղ Ալեքսանդրացու (378-444) գրություններում և երբեկից չի ենթադրել «խառնակում» կամ «ձուլում»⁶⁷:

Երկու եզրերի կիրառումը ճառերում բնորոշում է մի գործընթաց՝ Աստծո Որդին վերցնում է այն, ինչն «իրենը չէր», և անշփոթ (հագնել) ու անքակտելի (խառնել) կերպով «գարձնում» իրենը: Աստծո մարդեղացման մասին նման պատկերացումը և բառապաշարը հստակ ցույց են տալիս, որ հեղինակը քաջաձանոթ է եղել Դ-Ն դդ. ուղղափառ քրիստոսաբանությանը, սակայն որևէ կերպ չի անդրադարձել նեստորական կամ քաղկեդոնական պատկերացումներին, ինչը պայմանավորված է եղել առնվազն երկու հանգամանքներով.

ա. Ճառերի բնույթը բոլորովին այլ է:

բ. Մինչև Զ դարը շատ քիչ է խոսվում նեստորականության, առավել ևս քաղկեդոնականության մասին:

Ս. Սահակ Պարթևն ու ս. Մեսրոպ Մաշտոցը, որ անդրադառնում և հերքում են «երկու որդիներ» կամ «երկու տաճարներ» մոփսուեստական ընկալումը, այն էլ՝ ի պատասխան իրենց ուղղված նամակներին, նեստորականներին անդրադառնում են ընդամենը մեկ տողով, իբրև Թեոդորոս Մոփսուեստացու աշակերտների.

«Եւ որ Թէոդորեայ Մամուեստացոյ աշակերտեալք իցեն՝ առ ժամանակս ի շնորհացն Աստուծոյ այնպիսի ինչ աստ չեւ է յայտնեալ, ապա թէ իցէ ծածկեալ ի ժանգոյ աղտեղութեան, ի հարկէ ջան լիցի մեզ խել զխոշն»⁶⁸:

Սբ. Եզնիկ Կողբացուն՝ ս. Մեսրոպին ուղղված նամակում անդրադարձ է արվում Եփեսոսի ժողովին և նեստորականությանը հետևյալ տողերով.

«... ի միաբանութիւն եկին ամենայն եպիսկոպոսք Հոռոմոց՝ ունել հաստատուն զառաջին երեքհարիւրոցն հաւատս, եւ նզովեցին, զի մի ոք իշխեսցէ նո-

⁶⁶ Shahe Ananyan (Archimandrite), «The Armenian Chritological Tradition», *The Dialogue between the Eastern Orthodox and Oriental Orthodox Churches*, ed. by Christine Chaillot, Volos, 2016, p.304.

⁶⁷ Նույն տեղում, էջ 302 հմմտ. *The Teaching of Saint Gregory*, Translation, Commentary and Introduction by Robert W. Thomson, rev. ed., New York, 2001, աղտ. 155, p. 106:

⁶⁸ Պատասխանի թղթոյն Պրոկղի Երանելոյ, ի Սահակայ եւ ի Մաշդոցէ, Սուրբ Վարդապետացն Հայոց (ՄՀ, հ. Ա, Ե դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, հ. 30, էջ 222 հմմտ. Պատասխանի Տեառն Սահակայ, Թղթոյն Ակակայ, (ՄՀ, հ. Ա, Ե դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, հ. 10, էջ 224: Ընդդէմ Մոփսուեստացու ուսմունքի տե՛ս Պատասխանի թղթոյն Պրոկղի Երանելոյ, ի Սահակայ եւ ի Մաշդոցէ, հ. 20-23, էջ 220, Պատասխանի Տեառն Սահակայ, Թղթոյն Ակակայ, հ. 8, էջ 223:

րած[ին] ինչ եւ աստարոտի հաւատս, այլ ի նորին վերայ շինել եւ զնոյն ուսուցանել»⁶⁹:

Այս հատվածին շարունակում է արդեն ուղղափառ խոստովանությունը և որևէ այլ բառ նեստորականների մասին չի ասվում:

Ուղղակիորեն նեստորի անունը հիշատակվում է ս. Կորյունի պատմության «տոնական» տարբերակում⁷⁰, Մամբրե Վերծանողին վերագրվող ճառերից մեկում⁷¹, ս. Հովհան Մանդակունու կանոններից մեկում⁷², ս. Մովսես Խորենացու պատմության⁷³ և Ղազար Փարպեցու նամակի⁷⁴ մեջ՝ նրա մասին խոսելով շատ համառոտ կերպով: Ընդորում՝ այս հիշատակություններն էլ բավարար չեն ասելու համար, որ հեղինակները որևէ կերպ մտահոգված են եղել կամ պաշարել են նեստորականության դեմ, առավել ևս, երբ համեմատում ենք նեստորականների մասին անուղղակի հիշատակումները և ուղղափառ քրիստոսաբանության ուղղակիորեն շարադրումը: Վերջինս եղել է ժամանակաշրջանի գրեթե բոլոր հեղինակների ուշադրության կենտրոնում, իսկ առաջինի մասին հիշատակումները, կարծես թե, քրիստոնյա աշխարհում առկա իրականության հպանցիկ անդրադարձը լինեն:

Ինչ վերաբերում է քաղկեդոնականությանը, ապա դրա մասին առաջին անգամ խոսվում է Զ դարում՝ Բաբկեն Ա Ոթմսեցի կաթողիկոսի երկրորդ նամակում (507/508 թ.), որտեղ այն նույնացվում է նեստորականության հետ: Իբրև անմիջական անդրադարձի և պաշտոնական մերժման՝ այն առաջին անգամ արժանանում է Դվինի Բ ժողովով՝ 555 թվականին⁷⁵: Սա պայմանավորված է նաև նրանով, որ «մինչև 518 թ. Քաղկեդոնի դավանաբանական բանաձևը լուծյան էր մատնված նաև Բյուզանդական կայսրության մեջ»⁷⁶:

Ամփոփելով նշենք, որ երկար դարեր «Հաճախապատում ճառերի» հեղինակ է համարվել ս. Գրիգոր Լուսավորչը, ապա ժԹ դարից սկսյալ ճառերի հեղինակ է համարվել ս.

⁶⁹ Ի թղթոյն եզնկայ Կողբացոյ թարգմանչի, զոր գրեաց ի կոստանդնուպոլիս առ Երանելին Մաշտոց վարդապետ, յետ առաջնոյ ժողովոյն Եփեսոսի յորում լուծին ի պատուոյ զնեստոր Կոստանդնուպոլսի եպիսկոպոս (ՄՀ, հ. Ա, Ե դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 513:

⁷⁰ Ի յիշատակ պատմութեան վարուց Մեսրոպայ զոր ասացեալ է նորին աշակերտի Կորեան (բնագիր Գ), հ. 72, էջ 269:

⁷¹ Մամբրեի Վերծանողի ճառք, հատ Ա, հ. 159, էջ 1104, հմմտ. նույն տեղում, հատ Բ, հ. 198, էջ 1116:

⁷² Կանոնք Յովնաննու Մանդակունոյ Հայոց Կաթողիկոսի [Գլուխք Թ] (ՄՀ, հ. Ա, Ե դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, կանոն ՈՍԹ (ՈՍԵ) Գ, էջ 1282:

⁷³ Հայոց Պատմութիւն Մովսիսի Խորենացոյ, գրք. Գ, գլ. ԿԱ, էջ 2097-2098:

⁷⁴ Թուղթ Ղազարայ Փարպեցոյ մեղադրութիւն ստախաւս արեղայից յառաջաբան թղթոյս առաքեալ Յամիթ քաղաքէ (ՄՀ, հ. Բ, Ե դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, հ. 79, էջ 2384:

⁷⁵ Shahe Ananyan (Archimandrite), «The Armenian Christological Tradition», p. 307:

⁷⁶ Ե. աբ. Պետրոսյան, Ներածություն Հայ Եկեղեցու Քրիստոսաբանության, Բ տպգ., Երևան, 2016, էջ 13:

նակությունը որոշ գիտնականների կողմից սկսել է վերագրվել ս. Մեսրոպ Մաշտոցին: Այս գիտնականների կողքին եղել են նաև այլ ուսումնասիրողներ, ովքեր վերոհիշյալ երկու վերագրումներին էլ դեմ են հանդես եկել: Նրանցից վերջինը Աբրահամ Տերյանն է, ով «*Moralia et Ascetica Armeniaca: The Oft-Repeated Discourses*» վերնագիրը կրող իր հրատարակության առաջաբանում փաստարկված կերպով և համակողմանիորեն պատասխաններ է տալիս ճառերի հեղինակի ինքնության վերաբերյալ առկա հակադիր մոտեցումներին:

Ա. Տերյանի այս արժեքավոր ուսումնասիրության համեմատությունը նախկինում գրված ուսումնասիրությունների հետ՝ հստակ ցույց է տալիս, որ որևէ հիմք չկա կարծելու, թե ս. Գրիգոր Լուսավորիչը կամ ս. Մեսրոպ Մաշտոցն են հեղինակել մեզ հասած ճառերը, թեև ճառերի հեղինակի ինքնության հարցը մնում է անորոշ: Ի մտի ունենալով ճառերում օգտագործված աղբյուրների թվագրումը և ճառերի լեզուն ու ոճը՝ համոզվում ենք նաև, որ մեզ հասած ճառերի կազմության հնարավոր ամենավաղ թվականը 9 դարն է, իսկ ամենաուշը՝ է դարը, թեև է-ԺԳ դարերի ընթացքին ճառերը կրել են էական փոփոխություններ:

DEACON DAVID SAHAKYAN

ONCE AGAIN ON THE AUTHORSHIP AND DATE
OF "THE OFT-REPEATED DISCOURSES OF ST. GREGORY
THE ILLUMINATOR": ON THE OCCASION OF A RECENT
PUBLICATION BY ABRAHAM TERIAN

Keywords: St. Gregory the Illuminator, St. Mesrop Mashtots, research, counterarguments, monasticism, sources, content, context, theology, historical period.

Traditionally, the *Oft-repeated Discourses* (*Yachakhapatum Charek*) was ascribed to St. Gregory the

it was either one of the "second-generation" students of St. Mesrop or someone who lived even later. Abraham Teryan's *Moralia et Ascetica Armeniaca: The Oft-Repeated Discourses* is the most recent work to address this question. Illuminator, because his name appears in the titles of all extant manuscripts, and several medieval sources including the *History* of Agathangelos confirm this attribution.

Since the 19th century, many scholars have stated that the author of the "Oft-repeated Discourses" was St. Mesrop Mashtots'. This view is based on a testimony of St. Koriwn that St. Mesrop wrote "oft-repeated discourses", as well as on the fact that the nature and content of the extant discourses, particularly the biblical references and many examples are significant evidence for the date of the author.

Other scholars opine that neither St. Gregory nor St. Mesrop was the author of the *Oft-Repeated Discourses*; rather,

By comparing Terian's persuasive study with prior scholarly work, examining all his arguments and providing some new ones, the author concludes that there is no sufficient basis for asserting that St. Gregory the Illuminator or St. Mesrop Mash-tots' were the authors of the *Oft-repeated Discourses*. He is more inclined to maintain that the extant discourses were compiled (if not written) most likely in the 6th century by an unknown compiler (author), and that later they were revised again.

ДИАКОН ДАВИД СААКЯН

ВНОВЬ ОБ АВТОРСТВЕ И ВРЕМЕНИ СОЗДАНИЯ

“МНОГОВЕЩАТЕЛЬНЫХ РЕЧЕЙ СВ. ГРИГОРИЯ ПРОСВЕТИТЕЛЯ” (ПО ПОВОДУ ПУБЛИКАЦИИ АБРААМА ТЕРЬЯНА)

Ключевые слова: Св. Григорий Просветитель, св. Месроп Маштоц, исследование, контраргументы, монашество, источники, содержание, контекст, богословие, исторический период.

Традиционно автором “Многovesщательных речей” считался св. Григорий Просветитель. Его имя вписано в заголовках всех сохранившихся рукописей, об этом свидетельствует в своей “Истории” Агафангел и другие средневековые авторы.

Начиная с XIX века среди ученых распространилось мнение о том, что автор “Многovesщательных речей” – св. Месроп Маштоц. Оно основано на свидетельстве св. Корюна, гласящем, что св. Месроп написал “часто произносимые речи”, а также на том, что характер и содержание дошедших до нас “речей” (в частности, использованные автором библейские цитаты и множество приведенных примеров), позволяют судить о времени жизни их автора.

Другие ученые считают, что ни св. Григорий, ни св. Месроп не были авторами “Многovesщательных речей”. По их мнению, автор – либо один из учеников второго поколения св. Месропа, либо некто, живший еще позднее. Этого же мнения придерживается Абраам Терьян, недавно также высказавшийся по данному вопросу (*Moralia et Ascetica Armeniaca: The Oft-Repeated Discourses*).

Автор, соглашаясь с доводами А.Терьяна, дополняет их новыми и склоняется к тому, что “Многovesщательные речи” были составлены скорее всего в VI веке неизвестным автором, но затем были еще раз переработаны.